

# ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ



«ԱՁԴԱԿ»Ի

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

ԽԻԻ 8

ՆՈՅԵՄԲԵՐ 2002

bezdlg\_mezdlg@hotmail.com

## 22 ՆՈՅԵՄԲԵՐ

## ԿԱՐԴԱԼ ԹԵ ԶԿԱՐԴԱԼ

Մօտ օրէն պիտի տօնենք Լիբանանի անկախութեան տօնը: Դպրոցներուն մէջ արդէն իսկ սկսած էք այս առիթով բանաստեղծութիւններ եւ երգեր սորվիլ, դասարանները վարդարել լիբանանեան դրօշակներով, ինչպէս նաեւ՝ պատրաստուիլ դպրոցական տօնակատարութիւններու: Իսկ ձեզմէ շատեր անհամբեր են, որ վերջապէս պիտի ունենան արձակուրդի օր մը:

Արձակուրդը անշուշտ որ հաճելի է: Սակայն միշտ մեր միտքը պահենք, որ 22 Նոյեմբերը պարզ արձակուրդի օր մը չէ: 22 Նոյեմբեր 1943ին Լիբանանի վաւակները ըմբոստացան հոգատար պետութեան՝ Ֆրանսայի դէմ եւ պահանջեցին իրենց ամբողջական անկախութիւնը: Անոնք նահատակուեցան, բանտարկուեցան, սակայն հաստատ մնացին անկախ հայրենիքի մէջ ապրելու իրենց որոշումին վրայ:

22 Նոյեմբերին յարգանքով յիշենք բոլոր անոնք, որոնց զոհողութեան շնորհիւ Լիբանան այսօր անկախ հանրապետութիւն է:

Կը սիրե՞ս գիրք կարդալ: Ռէ: Այո: Դուն կրնաս տարբեր կարծիք ունենալ, սակայն ես գիտեմ, որ կը սիրեմ կարդալ: Անցեալ օր ձեռքս անցաւ վրթանէս Փափապեանին «Ճարթաթ մը ճառին վրայ» պատմուածքը եւ դարձեալ կարդայի: («Պատիկ-Մատիկ»ի այս թիւին մէջ կայ այս պատմուածքը): Գիտէ՞ք՝ կարդալէ ետք ինչ զգայի: Զգայի, որ «Գիրքը մարդուն լաւագոյն բարեկամն է», որովհետեւ նոյնիսկ պատիժի ընթացքին, երբ ոչ ոք կ'ուզէ քեզի հետ խօսիլ, գիրքը կը մնայ քովդ եւ քեզի հետ «կը խօսի»: Ան կը պատմէ այլ մարդոց ուրախութիւններուն ու դժուարութիւններուն մասին եւ լուսումներ կու տայ անոնց: Տանդ մէջ նստած տեղեկութիւններ կ'ունենան աշխարհի չորս կողմը պատահած բոլոր իրադարձութիւններուն մասին:

Գիտե՞ս, թէ «Տիպի»ի բոլոր ժապաւէնները գիրքերու ալ վերածուած են: Մեծերու ժապաւէններն ալ գիրքերու կը վերածուին: Մարդիկ մեծ հաճոյքով կը կարդան այդ գիրքերը, որովհետեւ անոնք շատ դիրութեամբ գիրքերը կրնան իրենց հետ տեղափոխել եւ կարդալ, երբ կը զգան, թէ ազատ են եւ առանձին: Գիրք կարելի է կարդալ հանրակառքին եւ ինքնաշարժին մէջ, զբօսանքի ընթացքին, դասերը պատրաստելէ ետք, անկողի-




նին մէջ: Այսինքն՝ երբ դուն գիրքը չես ձգեր, ան ալ քեզ առանձին չի ձգեր:

Գիրքին կարեւորութեան պատճառով աշխարհի չորս կողմերը կառուցուած են գրադարաններ եւ մատենադարաններ: Իսկ եթէ կը կարճես, թէ գրադարաններն ու մատենադարանները շատ հեռու են ձեր տունէն, կրնաս այցելել գիրքերու ցուցահանդէսները, ուր մէկտեղուած կ'ըլլան բոլոր գրախանութիւններուն գիրքերը, եւ ընտրել այն, որ քեզ կը հետաքրքրէ:

Դասերու կողքին ինքնազարգացումն ալ լաւ է, ուրեմն կարդա՛, որպէսզի ինքզինքդ զարգայնես: Գիրքն է, որ, առանց կճճի ըլլալու, քեզի կու տայ ուրիշ տեղեկութիւն:



ԱՐԻՆ ԵԱԼԱԿԵԱՆ (12 տարեկան, Ե. Թաթիկեան)



ՅՈԼԵՐ ՊԷՋԵԱՆ (Զ. դասարան, Ե. Թաթիկեան)

## ԱՆՍԽԱԼ ԳՐԵՆՔ

Եթէ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտ ես, մասնակցէ՛ «Պատիկ-Մատիկ»ի հայերէն ուղղագրութեան մրցանքին: (Մանրամասնութիւնները՝ էջ 6)

ملحق أزيك



# ՊՁՏԻԿ – ՄՁՏԻԿ Կ’ԱՅՅԵԼԷ «ԹՈՐՈՍ ԱՌՍԼԻՆ» ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏԻ ԴՊՐՈՑԸ



Պլատիկ – Մպտիկ շատ կը սիրէ արուեստները: Ան յաճախ կ’այցելէ ցուցասրահներ, ուր կը ցուցադրուին նկարիչներու կամ քանդակագործներու արուեստի գործերը: Ան մանաւանդ կը սիրէ նկարչութիւնը եւ երբեմն ինքն ալ, մատիտ ու ներկեր առնելով, կը սկսի գծել: Սակայն դժբախտաբար իր գծածները միշտ չի հաւնիր: Երբեմն իր մայրիկը կամ հայրիկը գծել կ’ուզէ, բայց գծագրութիւնները ուրիշ անձերու կը նմանին: Ձի կը գծէ, մարդիկ գծածը ոչխար կը կարծեն, ոչխար կը գծէ՝ կատու կը կարծեն:

Օր մըն ալ Պլատիկ – Մպտիկ հետաքրքրական դպրոցի մը մասին լսեց: Կարծէք ծիշդ իր ուլածն էր. գծագրութեան դպրոց մը, ուր իրեն պէս նկարչութիւնը սիրող երեխաներ շաբաթավերջին կը հաւաքուին եւ ժամերով կը գծեն ու կը ներկեն: Անշուշտ գծագրութեան ուսուցչուհիներ շատ լաւ հոգ կը տանին անոնց: Կը սորվեցնեն, թէ ինչպէս հայրիկին նկարը հայրիկին պէտք է նմանի, եւ թէ ինչպէս գոյները իրարու խառնելով նոր գոյներ կը շինեն...

Եւ խանդավառ Պլատիկ – Մպտիկ ճաբաթ առտու կ’ուղղուի համապայինի «Թորոս Առսլին» կերպարուեստի դպրոց: «Թորոս Առսլին»-ի աշակերտները կը սորվին գծագրութեան օրէնքները, գոյները եւ ձեւերը: համապայինի Նշան Փալանճեան ծեմարանի



նի գեղեցիկ պարտէպին մէջ բնութիւն կը նկարեն, իրենց երեւակայածն ու ուլածը կը գծեն, ձեռային աշխատանքներ կը պատրաստեն: Իսկ ամէնէն ուրախ լուրը այն է, որ

ուրիշ արուեստագետներու նման, տարեշրջանի աւարտին Պլատիկ – Մպտիկ ինքն ալ պիտի մասնակցի տարեկան ցուցահանդէսին: Իր ծնողքը, ուսուցիչները եւ ընկերները պիտի գան եւ դիտեն իր գծածները:

Արդէն Պլատիկ – Մպտիկ անհամբեր է գծելու: Մեծ սրահին մէջ աշակերտները, ուսուցիչներու հսկողութեամբ, խումբերու բաժնուած են: Կան մեծերու, միջակներու եւ շատ փոքրերու խումբերը: Քանի որ ինք տակաւին շատ պլատիկ է, Պլատիկ – Մպտիկ կը նստի փոքրերու սեղանին շուրջ եւ կը սկսի իր նոր ընկերներուն նման գծել ու ներկել ձեռայինի տուփ մը:

Պլատիկ – Մպտիկ շուտով կը ճանօթանայ նոր ընկերներու: Ահա ծիշդ իր դիմացը


առարկաներ) գծել: 10 տարեկան Կարէն Փաթափութեան կը նախընտրէ ներկել մեղմ գոյներով, իսկ իր նախասիրած նիւթերը պալատներ եւ գեղեցիկ բնութիւններ են:

Պլատիկ – Մպտիկին ծիշդ քովը նստող Ռաֆֆի Խալոյեան (5 տարեկան) շատ կը սիրէ բեռնատար գծել: «Մէջն ալ մարդ կը գծեմ», կը բացատրէ ան Պլատիկ – Մպտիկին:

Եւ այսպէս, գծելով ու երբեմն ալ նոր ընկերներուն հետ պրուցելով, ժամերը կը սահին: Պլատիկ – Մպտիկ տխուր է, որ պիտի բաժնուի իր գծագրութեան դպրոցէն, բայց յանկարծ կը յիշէ, որ կրնայ ամէն շաբաթ նոյնքան ուրախ պահեր անցընել: Ան տուն կ’երթայ՝ հաշուելով, որ մինչեւ յաջորդ ճաբաթ օր քանի՞ օր կը մնայ:



նստած Ծողեր Յովհաննէսեանը (11 տարեկան), որ իրեն պէս շատ կը սիրէ գծագրութիւնը եւ մանաւանդ՝ բնութիւն գծելը: «Գծած ատենս կը փոխադրուիմ ուրիշ աշխարհի մէջ», կ’ըսէ ան: Իսկ Ալին ժապապ (12 տարեկան) կ’ըսէ, որ ամէն ինչ կը սիրէ գծել: Ան իր ապատ ժամերուն մեծ մասը գծելով կ’անցընէ: Ժաք Պետրոսեան (14 տարեկան), որ արդէն երեք տարի է ի վեր կը հետեւի «Թորոս Առսլին» դպրոցի դասընթացներուն, ամէնէն աւելի կը սիրէ «անկենդան բնութիւն» (քով քովի դրուած



**ՀԱՄԱՋԳԱՅԻՆ «ԹՈՐՈՍ ԱՌՍԼԻՆ»  
ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏԻ ԴՊՐՈՑ**

**ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԸ  
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ**

- Պատահներուն՝ Ուրբաթ օրերը ժամը 16:00էն 18:00
- Փոքրիկներուն՝ Ծաբաթ օրերը ժամը 10:00էն 12:00
- Սիրողական՝ Երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը ժամը 16:00էն 18:00

Վայր՝ Նշան Փալանճեան Ծեմարան, Զոքաք Էլ Պլաթ:

Հեռ. 01/375411, Երկուշաբթի, Երեքշաբթի, Հինգշաբթի եւ Ուրբաթ ժամը 15:30էն 18:30, Ծաբաթ ժամը 10:00էն 15:00

ԾԱՆՕԹ.- Աշակերտութեան երթուղարձը «Լեւոն Շանթ» կեդրոնէն դէպի Նշան Փալանճեան Ծեմարան ապահովուած է::



# ՊՂՏԻԿ-ՄՂՏԻԿ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ

Պղտիկ - Մղտիկ, երբ փոքր էր, շատ կը սիրէր հեքիաթ մտիկ ընել: Բիմա այլեւս մեծցած է եւ կրնայ կարդալ ու գրել. ան կը սիրէ այնպիսի հեքիաթներ, որոնց հերոսները կը կռուին վհուկներու, չարերու եւ հսկաներու դէմ, իսկ բարի պարիկներ

թիւններ: Վերջերս Պղտիկ-Մղտիկ ընթերցանութեան եւ պատմութիւններու հետ կապուած հետաքրքրական նորութիւններու ճանօթացաւ: Ան անպայման կ'ուզէ այդ տեղեկութիւնները բաժնել ձեզի հետ.

*ԳԻՏԸԻՔ, ԹԵ՛...*

Տարբեր երկիրներ, ցամաքամասեր եւ մշակոյթներ ունին իրենց իւրայատուկ պատմութիւնները եւ տիպարները: «Այատտիւն»ը նշանաւոր է արաբական աշխարհին մէջ եւ «հսկայ սպաննող ժաքը»՝ անգլիական գրականութեան մէջ:

Բեքիաթները սկզբնական շրջանին անպայման փոքրերու համար գրուած չեն, բայց փոքրիկները՝ շատ սիրած եւ իւրացուցած են զանոնք:

Բեքիաթներու տարբեր տեսակներ կան, օրինակ՝ խօսող անասուններու հեքիաթներ, կրօնական հեքիաթներ, խնդալիք հեքիաթներ եւ այլն...

Կան հեքիաթներ, որոնք մի-




պէս՝ «Անտառի քնացող իշխանուհին», «Կարմիր գլխարկիկը», «Մոխրիկը»:

Գերմաներէն խօսող երկիրներու մէջ նշանաւոր են կրիմ եղբայրներուն կողմէ հաւաքուած կամ գրուած հեքիաթները, օրինակ՝ «Ձիւնաթոյրը եւ եօթը թզուկները», «Բամփելսթիլսթին» եւ ուրիշ շատ պատմութիւններ:

● Անգլիական հեքիաթները առաջիններն են, որոնք միայն մանուկներու համար գրուած են:

● Ափրիկեան հեքիաթներուն անպայման կ'ընկերանան թմբուկ, պար եւ երգ:



օգնութեան կը հասնին անոնց: Պղտիկ - Մղտիկ կը սիրէ ոչ միայն այն պատմութիւնները, ուր անպայման կախարդութիւն, թռչող գորգեր, լամբեր, կառքեր կան, այլ նաեւ այնպիսիները, որոնք ունին երեւակայութիւն, արկածախնդրութիւն, սրամտութիւն եւ հաճելի չափազանցու-

ջազգային են եւ անոնց տարբերակները կրնանք գտնել բազմաթիւ ժողովուրդներու մէջ՝ այլ անուններով եւ աննշան տարբերութիւններով. օրինակ՝ երեք խոզուկներու պատմութիւնը, Փենքէլքին պատմութիւնը, որ նաեւ ծանչուած է «Ճամբորդող կարկանդակը» կամ «Ճոնի կարկանդակը» անունով:

### ԲԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մանուկներու առաջին ֆրանսական գիրքը լոյս տեսած է 1697ին՝ «Մամա բադ» անունով: Անոր մէջ լոյս տեսած են ձեզի ճանօթ հեքիաթներ, ինչ-



Ճար.ը՝ էջ 7

## ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՃՈՅՔԸ

«Կարդալ բայը չի հանդուրժեր հրամայական եղանակը: Նոյն այս հակակրանքը ունին քանի մը ուրիշ բայեր, ինչպէս՝ «սիրել» եւ «երազել» բայերը»:

Այս պարբերութեամբ է, որ ֆրանսացի ճանօթ գրագէտը կը սկսի իր «Քոմ Էօն Բոման» (վէպի մը նման) գիրքը:

Գրականութեան երկար տարիներու այս ուսուցիչը եղած է նաեւ անյազ ընթերցող մը, որ ուզած է իր աշակերտներուն փոխանցել ընթերցանութեան սէրը: Եւ որպէսզի ընթերցանութիւնը դպրոցին մէջ անհաճոյ պարտականութիւն մը չմնայ, ան պատրաստած է 10 իրաւունքներու ցանկ մը:

### ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐԸ

#### 1.- Չկարդալու իրաւունքը

Կարդալու եւ չկարդալու որոշումը քուկդ է:

#### 2.- Էջեր ցատկելու իրաւունքը

Մենք իրաւունք ունինք որոշելու գիրքէն ո՛ր պարբերութիւնը կարդալ կամ չկարդալ (եթէ այդ պարբերութիւնը մեզի երկար, ձանձրացուցիչ, շատ նկարագրական կը թուի):

#### 3.- Գիրք մը չվերջացնելու իրաւունքը

Բակառակ մեր ծիգերուն, երբեմն շատ դժուար կ'ըլլայ ընթերցանութիւնը շարունակել: Ընթերցանութեան մէջ ստիպուած չենք սիրելու ամէն ինչ: Իւրաքանչիւր անհատ ունի իր նախասիրութիւնները:

#### 4.- Վերստին կարդալու իրաւունքը

Կարելի է նոյն գիրքը նորէն կարդալ, պարզապէս՝ որովհետեւ շատ սիրեցիր, կ'ուզես բան մը ստուգել եւ այլն:

#### 5.- Ամէն տեսակ բան կարդալու իրաւունքը

Կարդալով է, որ մենք պիտի կարենանք գրութիւնները գնահատել սորվիլ եւ վանազանել պէտք սելըրի եւ Ռաֆֆիի գործին միջեւ:

#### 6.- «Պովարիկմի» իրաւունքը

Ընթերցումէն անմիջական եւ ուղղակի հաճոյք վզալու վիճակն է:

#### 7.- Որեւէ տեղ կարդալու իրաւունքը

Իրաւունք ունինք կարդալու գրադարանին մէջ, կամ վրթանէս Փափազեանի նման՝ ճառին վրայ...

#### 8.- Պարբերութիւններ պատահականօրէն կարդալու իրաւունքը

Ազատ պահ մը գրադարանէն առնել որեւէ գիրք, բանալ որեւէ էջ եւ վայրկեան մը մխրձուիլ տարբեր աշխարհի մը մէջ:

#### 9.- Բարձրաձայն կարդալու իրաւունքը

Թէ՛ քեզի հաճելի կ'ըլլայ եւ թէ այդ հաճոյքը ուրիշներու կրնաս փոխանցել...

#### 10.- Լուռ մնալու իրաւունքը

Պայման չէ, որ մարդոց բացատրես, թէ ի՞նչ հասկցար կարդացածդ:



### ՔՆԱՆԱԼԷ ԱՌԱՋ՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



Բրիտանիոյ մէջ կատարուած հար-  
ցախոյսէ մը յայտնի դարձած է, թէ  
անգլիացի ճոռղներուն մեծ մասը (90  
առ հարիւրը) իրենց պաւակները կը  
քնայնէ պատմութիւն մը պատմելով:  
2000ին անոնց համեմատութիւնը  
միայն 40 առ հարիւր էր:

Պատմութեամբ քնանալու սովորու-  
թեան վերստին տարածման մէջ ան-  
շուշտ մեծ դեր ունեցած է մանուկնե-  
րուն սիրելի հէրի Փոթըրը: Մեծ թիւով  
ճոռղներ անոր գիրքերը կարդալով կը  
քնայնեն իրենց երեխաները:

## «ՊԻՊԼԻՈՒԹԵՔԱ ԱԼԵՔՍԱՆՏՐԻԱ» ԴԱՐՁԵԱԼ ԾՆԱԻ 1600 ՏԱՐԻ ԵՏՔ

հին դարերու բոլոր գրա-  
դարաններուն ամէնէն կարե-  
ւորը եւ նշանաւորը Աղեք-  
սանդրիոյ գրադարանն էր:  
Գրադարանը կը պարունակէր  
աշխարհի ամէնէն հին եւ  
արժէքաւոր ձեռագիրները:  
հոն նաեւ տարբեր երկիրնե-  
րէ կը հաւաքուէին գիտնա-  
կաններ եւ կը կատարէին  
գիտական ուսումնասիրու-  
թիւններ:

Դարեր շարունակ գիտու-  
թեան եւ մշակոյթի կեդրոն  
հանդիսանալէ ետք, Աղեք-  
սանդրիոյ գրադարանը կոր-  
ծանեցաւ 1600 տարի  
առաջ:


Շատ երկար ժամանակ  
միայն մարդոց մտքին մէջ  
մնալէ ետք, անցնող ամիս

Աղեքսանդրիոյ մէջ կատար-  
ւեցաւ բացումը նոր գրադա-  
րանին՝ «Պիպլիոթեքա Ալեք-  
սանտրիա»ին: Այս գրադա-  
րանը կառուցուեցաւ գրեթէ  
այն վայրին մէջ, ուր կը  
գտնուէր հին գրադարանը:

Նոր գրադարանը կը բաղ-  
կանայ ճովուն մօտ շինուած  
հինգ յարկանի կրանիթեայ  
կլոր շէնքէ մը, որ ինքնին

հրաշալի կառոյց մըն է:

Քաղաքաւոր գիրքերու եւ  
արժէքաւոր ձեռագիրներու  
կողքին, «Պիպլիոթեքա  
Ալեքսանտրիա» ունի կանա-  
կան բաժիններու յատկապ-  
ւած գրադարաններ, բազ-  
մաթիւ ընթերցասարահներ,  
համագումարներու սրահ,  
երեք թանգարան եւ ուսում-  
նասիրութեան կեդրոններ:



## ՇԵՐԼՈՔ ԲՈՒՄՍ ՄԵՏԱԼԻ ԱՐԺԱՆԱՅԱԻ

### ՄՕՏ ՕՐԵՆ՝ ԲԵՐԻ ՓՈԹԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԺԱՊԱԿԵՆԸ

Վստահաբար ձեռքով շատեր լսած են հէ-  
րի Փոթըրի մասին, կարդացած են անոր  
գիրքերը կամ դիտած են ժապաւէնները:

Բակառակ մանկավարժներու մեծամաս-  
նութեան կողմէ գնահատուած չըլլալուն,  
անգլիացի գրող Ճէյ. Բէյ. Ռոլինկի «*Բէրի  
Փոթըր*» վէպերու շարքը շատ սիրուեցաւ  
մանուկներու եւ պատանիներու կողմէ,  
որոնք ոչ միայն կը կարդան գիրքերը, այլ  
նաեւ կը հաւաքեն հէրի Փոթըրի անուն կամ  
նկար ունեցող առարկաներ, գրեմական  
պիտոյքներ եւ այլն:

Բէրի Փոթըր պատանի կախարդ մըն է,  
որ կ'ուսանի կախարդներու յատուկ դպրոցի  
մը մէջ: Բինգ գիրքերու մէջ ան իր ընկեր-  
ներուն եւ բարեկամներուն հետ պայքար կը  
մղէ չար կախարդներուն դէմ:

Անցեալ տարի հրապարակ իջաւ Բէրի  
Փոթըրի առաջին գիրքին՝ «*Բէրի Փոթըր  
էնտ տը ֆիլոզոֆըրոյ սթոն*»ի («*Բէրի Փոթըր  
եւ կախարդին քարը*») ժապաւէնը, որ նոյն-  
պէս շատ սիրուեցաւ մանուկներուն կողմէ:  
Դեկտեմբերին պիտի սկսի երկրորդ գիրքին  
վրայ հիմնուած ժապաւէնին՝ «*Բէրի Փոթըր  
էնտ տը չէյմպըր աֆ սիթրէթ*»ի («*Բէրի  
Փոթըր եւ գաղտնիքներու սենեակը*») ցու-  
ցադրութիւնը:

Մեզմէ աւելի քան հարիւր  
տարի առաջ գործած լոնտոնցի  
նշանաւոր գաղտնի ուստիկան  
մը՝ Շերլոք Բոլմս վերջերս  
պարգեւատրուեցաւ Անգլիոյ  
Քիմիագիտութեան Արքայական  
Ընկերակցութեան կողմէ, որով-  
հետեւ անոր հետախուզական ձեւերը մեծա-  
պէս օգտակար դարձած են գաղտնի ուստի-  
կանական մարպին վարձապան:

Ներողութիւն, չկարճեք, թէ խօսքը կը վե-  
րաբերի իսկական մարդու մը:

Աշխարհի ամէնէն նշանաւոր գաղտնի ու-  
ստիկանը՝ Շերլոք Բոլմս... գաղտնի ուստիկա-  
նական պատմուածքներու հերոս մըն է: Ան  
երեւակայական առաջին հերոսն է, որ կը  
պարգեւատրուի: Անոր մետալը անցուցած են  
իր արձանին վրային:

Շերլոք Բոլմսի «հայրն» է գրագէտ Սըր  
Արթըր Քանըն Տոյլ, որ տարիներ շարունակ  
գրած է գաղտնի ուստիկանական բազմաթիւ  
պատմուածքներ: Անոր պատմուածքներուն  
հերոսը Շերլոք Բոլմսն է, որ կ'ապրի Լոնտո-  
նի 221 Պէյքըր փողոցին վրայ, իր ընկերոջ՝  
տոքթ. Ուատընի հետ: Նշանաւոր գաղտնի  
ուստիկանը ունի շատ իւրայատուկ արտաքին  
մը: Ան բարձրահասակ եւ նիհար է, կը հագ-  
նի վերարկու եւ գլխարկ, իսկ իրեն հետ միշտ



ունի ճիւստորձ մը:

Շերլոք Բոլմսի պատմուածք-  
ները մինչեւ այսօր կը կար-  
դացուին մեծ յափշտակու-  
թեամբ: Անոնց մէջ գաղտնի ու-  
ստիկանը պարմանալի ձեւերով  
կը լուծէ ամէնէն խորհրդաւոր ու  
տարօրինակ ոճիրներն ու գաղտնիքները:

Գիտէ՞ք, թէ եղած են մարդիկ, որոնք  
կարծած են, թէ Շերլոք Բոլմսը իրական մէկն  
է եւ անոր նամակներ ուղղած են՝ խնդրելով,  
որ լուծէ վիրենք նեղացնող խորհրդաւոր  
գաղտնիքները:

### ՄԱՋԻՆ ՓԱԿՅՈՒԱԾ ԳՐԻՉՈՎ ԿԸ ԳՐԷ

Բնդիկ համալսարանաւարտ երիտասարդ  
մը կ'ուզէ ամէն գնով իր անունը տեսնել  
մրցանիշներու «*Կինէտ*» գիրքին մէջ: Այս  
նպատակին հասնելու համար ան հռչակաւոր  
հնդիկ բանաստեղծ Ռապինտրանա Թակորի  
մէկ բանաստեղծութիւնը ընդօրինակած է...  
իր մապին փակցուած գրիչով մը:

25 տարեկան Թափան Տէյ միաժամանակ  
կրնայ գրել նաեւ իր քիթով, ականջով եւ կոյճ  
ձեռքերով:

Պարզապէս գրելու ձիրք ունի...



## ԻՆՉ ԿԱՐԴԱՆՔ

Կ'ուպէք ձեր գիրք – ընկերներուն թիւը աւելցնել: Ահաւասիկ՝ լաւ առիթ մը: «Կիլիկիա» մատենաշարը հրատարակած է մատենակներու եւ պատանիներու յատուկ գիրքերու նոր շարք մը: Եկէք՝ ճանօթանանք այս գիրքերուն:

Ճատ փոքրիկներու յատուկ գիրքեր են «Մաշտոցի բանակը», «Ջեւերը» եւ «Գոյները»: Ափի չափ այս գեղեցիկ գրքոյկները կը սորվեցնեն վանապան ձեւեր, գոյներ եւ այդ ձեւերն ու



գոյները ունեցող առարկաներու անուններ:

«Մաշտոցի բանակը»ին մէջ շարուած են հայերէն այբուբենի տառերը: Իւրաքանչիւր էջի վրայ կան տառ մը, անով սկսող առարկայի մը նկարն ու անունը եւ առարկային անգլերէն իմաստն ու հնչիւնը:

Յաճախ ձեպի կ'ըսեն, որ ձեր գիրքը թափափած է: ՌՎ չ'ուպեր գեղեցիկ գիր ունենալ: Սակայն ոմանց համար դժուար է կոկիկ գրելը:



Գիտէ՞ք, թէ կոկիկ գրելը միայն վարժութեան հարց է:

Ահաւասիկ ձեպի գիրք մը՝ «Գիր ու գոյն», որ կոկիկ գրելու վարժութիւնը կը վերածէ հաճելի ժամանցի (39 էջ):

Գիրքի էջերուն մէջ պտտիլ սիրող պատանիներուն համար՝ ահաւասիկ երկու գիրք.

«Պտոյտ մը Պոյսոյ թաղերու մէջ» գիրքով 19րդ դարու երգի-ճագիր Յակոբ Պարոնեան «կը պտտի» իր բնական քաղաքին թաղերուն մէջ: Ան երգիճական ոճով կը ներկայացնէ ամէն մէկ թաղին եւ անոր բնակիչներուն առաւելութիւններն ու թերութիւնները: Գիրքը վերախմբագրուած է պատանիներու համար (197 էջ):

Արեւելահայ գրագէտ Վահան Խթթովենցի «Կեանքը հին հռոմէական ճանապարհի վրայ» գիրքը կը պատմէ հեղինակին

մանկութեան ու պատանեկութեան գեղեցիկ օրերուն մասին: Ընթերցողը կը ճանօթանայ հայկական քաղաքի մը բնութեան, բնակիչներուն եւ անոնց կեանքին: Ընթերցումի, շատ հաճելի պահեր պարգեւող այս գիրքը եւս ամփոփուած է (230 էջ):



## ԳԻՐՔԵՐՈՒ ՅՈՒՑԱԿԱՆՊԵՍՆԵՐ



Վերամուտին յաջորդող շաբաթներուն կը կազմակերպուին գիրքի եւ գրականութեան ցուցահանդէսներ: Անոնք ունին մեծերու եւ փոքրերու բաժանմունքներ: Կարճէք՝ ամրան արձակուրդէն ետք բոլորը կարօտցած են գիրքերը: Կ'ուպեն վանոնք ունենալ եւ կարդալ:

Այս ցուցահանդէսներէն ոմանք արդէն իսկ վերջացած են, իսկ ուրիշներ տակաւին կը շարունակուին: Ինչո՞ւ ոչ. մենք ալ երթանք եւ աւելի մօտէն կապ ստեղծենք գիրքերուն հետ:

### ● «ԿԱՅ ԳԻՐՔԻ 24ՐԴ ՅՈՒՑԱԿԱՆՊԵՍ-ՁԵՆՉ ՎԱՃԱՌՔ»

24րդ տարին ըլլալով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գրատունը կը կազմակերպէ հայ գիրքի ու գրականութեան նուիրուած ցուցահանդէսը: Ծ – 24 Նոյեմբեր տետող այս ցուցահանդէսը տեղի կ'ունենայ կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ:

Այս ցուցահանդէսը կարեւոր տեղ կը տրամադրէ մանկապատանեկան գրականութեան: Ինչ կը գտնէք ձեպ հետաքրքրող հայերէն բոլոր գիրքերը՝ գունապարդ հեքիաթներ, հետաքրքրական վէպեր, գիտական գիրքեր, համայնագիտարաններ, բառարաններ եւ մանկապատանեկան թերթեր:

Իսկ գիտէ՞ք, թէ ամէնէն հետաքրքրականը ի՞նչ է: Այն գիրքերը, զորս երկար ատենէ ի վեր կ'ուպէիք գնել, բայց չէիք կրնար, հիմա կրնաք ունենալ աւելի աժան գիներով:

Ուրեմն՝ օ՛ն: Օգտուեցէք առիթէն եւ ձեր գրադարանները հարըստացուեցէք հայերէն գեղեցիկ գիրքերով:

### ● «ԳԻՐՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 46ՐԴ ՅՈՒՑԱԿԱՆՊԵՍ»

1 – 17 Նոյեմբեր «Էքսիօ Պէրուլ» ցուցասրահին մէջ տեղի

կ'ունենայ «Գիրքի միջազգային 46րդ ցուցահանդէս»ը: Այս ցուցահանդէսը կազմակերպուած է Արաբական Մշակութային Ակումբի եւ Լիբանանի հրատարակիչներու Միութեան կողմէ:

Ցուցահանդէսին կը մասնակցին լիբանանեան եւ արաբական շուրջ 200 հրատարակչատուներ եւ գրախանութներ: Տեղի կ'ունենան նաեւ գրագէտներու հետ հանդիպումներ եւ գրական երեկոններ:

Ցուցահանդէսը բաց է առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ գիշերան ժամը 10:00:

### ● «ԼԻՐ ԱՆ ՖՐԱՆՍԷ»

Պէրուլի մէջ տեղի ունեցած Ֆրանսախօս երկիրներու Յոգ Վեհաժողովին առիթով, 1 – 10 Նոյեմբերին Պէրուլի «ՊիԷԼ» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ «Լիւր ան ֆրանսէ է ան միւլիք»ը («Ֆրանսերէնով եւ երաժշտութեամբ կարդալ»): Աշխարհի վանապան երկիրներէ հաւաքուեցան ֆրանսերէնով գրող գրագէտներ:

Այս առիթով կազմակերպուեցան գրական երեկոններ: Գրագէտները կրուցեցին իրենց ընթերցողներուն հետ եւ գիրքեր մակագրեցին: Նաեւ տեղի ունեցան երեք մեծ գրագէտներու՝ Վիքթոր Իլիկոյի, Ալբրտ Կամուսի եւ Ժըպրան Խալիլ Ժըպրանի նուիրուած հանդիսութիւններ:

### ● «ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԾԱՐԱԹ»

Դարձեալ ֆրանսախօս երկիրներու Յոգ Վեհաժողովին առիթով, 24 – 30 Նոյեմբեր կը կազմակերպուի «Սըմէն տէ սիանս»ը կամ «Գիտութիւններու շաբաթ»ը:

Այս առիթով տեղի կ'ունենան մանուկներու յատուկ գիտական խաղեր, փորձեր, ցուցադրութիւններ եւ մրցանքներ: Երեխաները կրնան ճանօթանալ գիտական բոլոր նորութիւններուն:

Գիտութիւնը հաճոյքի վերածող ձեւնարկ մը:



1. ՔԱՆԻ ԲԱՏ ԲԱՐ ԿՐՆԱՍ ԳՏՆԵԼ

Մ	Ա	Տ	Ի	Տ	Դ	Ա	Ս
Դ	Ա	Ս	Ա	Ր	Ա	Ն	Ն
Խ	Ո	Տ	Գ	Ի	Օ	Ք	Կ
Ա	Օ	Ր	Ի	Ո	Ր	Դ	Խ
Ղ	Ս	Ն	Ր	Տ	Ն	Է	Լ
Մ	Բ	Դ	Ք	Պ	Ջ	Ղ	Ե

Դպրոց - դաս - գիրք - մատիտ - դասարան - խոտ - օրհորդ - խաղ

ՆԱԹԱԼԻ ՍԱՔԱՐԵԱՆ (9 տարեկան, Ս. Խանամիրեան վարժարան)

2. ԳՏԻՐ ԿՈՐՍՈՒԱԾ ԲԱՌԵՐԸ

Դ	Ա	Ս	Ա	Ր	Ա	Ն	Ա	Ի	Ա	Կ	Ն	Ե	Ր
Ա	Ռ	Ա	Ջ	Ի	Ն	Տ	Ո	Ի	Փ	Ն	Ե	Ր	Կ
Ս	Տ	Ե	Պ	Ղ	Ի	Ն	Ո	Ի	Ա	Ջ	Ն	Ե	Ր
Ա	Ռ	Ծ	Ի	Ի	Մ	Ա	Տ	Ի	Տ	Ն	Ե	Ր	Կ
Ի	Մ	Ա	Տ	Ի	Տ	Գ	Ր	Ա	Ս	Ե	Ղ	Ա	Ն
Ո	Մ	Կ	Ր	Ա	Տ	Ո	Ի	Ն	Թ	Ո	Ի	Ղ	Թ
Ր	Տ	Ա	Շ	Ե	Լ	Ի	Ք	Մ	Ե	Լ	Ա	Ն	Ը

Դասարան - նաւակներ - դաս - սալոր - առաջին - ստեպղին - տուփ - ներկ - արձիւ - նուակներ - մատիտ - ներկ - մկրատ - մատիտ - գրասեղան - տուն - թուղթ - տաշելիք - մելանը

ՔՐԻՍՏԵԼ ՏՕՆԱՆԵԱՆ (9 տարեկան, Ս. Խանամիրեան վարժարան)

3. ԿՆՈՐԻ ՄԷՋ ԱՐԴ ՃԻԾԴ ՊԱՏԱՍԽԱՆԸ

- Լիբանան անկախութիւն
  - ա. 5 Նոյեմբեր 1943ին
  - բ. 22 Նոյեմբեր 1493ին
  - գ. 22 Նոյեմբեր 1943ին
- Այն ատեն Լիբանանի վրայ կ'իջիւէին՝
  - ա. թուրքերը
  - բ. ամերիկացիները
  - գ. ֆրանսացիները
- Լիբանանի դրօշակին գոյ-ներն են՝
  - ա. կարմիր, կապոյտ, նարնջագոյն
  - բ. կարմիր, ճերմակ, կանաչ, կարմիր
  - գ. կարմիր, ճերմակ, կարմիր
  - 4. Լիբանանի մայրաքաղաքն է՝
    - ա. Պէյրուս
    - բ. Երեւան
    - գ. Պաալպէք
  - 5. Լիբանանի առաջին անունը - իւ - - - է:

ԱԼԻՆ ՆՈՌԱ  
Մ. եւ Բ. Արսլանեան  
Ճեմարան  
Ե. դասարան

4. ԲԱՆԵՆՈՒԿՆԵՐ

ա. Մարդոց խօս- բ. Կը շրջի տուն գ. Չորս եղբայր  
քերը կը կրկնէ, բայց չունի, կը շոյէ թեւ եւ մէկ գլխարկի  
չի գիտեր թէ ի՞նչ չունի, մարմին ու ձեւ տակ:  
ըսել է: չունի:

ՅԱԿՈՒ ՄԵԼՔՈՆԵԱՆ (11 տարեկան, Թորոսեան վարժարան)



ԱՆՍԽԱԼ  
ԳՐԵՆՔ

-Մրցանքին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:  
-Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 18 հոկտեմբերէն 20 Նոյեմբեր, հեռաձայնելով 01-260115 թիւին, երկուշաբթիէն Ուրբաթ, կէսօրէ ետք ժամը 3:00էն 5:00:  
-Մրցանքը տեղի կ'ունենայ Կիրակի, 15 Դեկտեմբերին, «3. Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ ժամը 9:00էն 10:00 4րդ դասարան, 10:00էն 11:00 5րդ դասարան, 11:00էն 12:00 6րդ դասարան:  
-Իւրաքանչիւր մակարդակի շահողը պիտի ստանայ արժէքաւոր նուէր մը, իսկ բոլոր մասնակցողները պիտի ստանան յիշատակի նուէրներ:  
- Յաւելեալ տեղեկութիւններու համար հետեւիլ «Ազդակ»ին:

Ժամանցին պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ազդակ»ի Ճաբաթ, 16 Նոյեմբեր 2002ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

ԱՄՍՈՒԱՆ ԲԱՐՅՈՒՄԸ

Կրնան մասնակցիլ 6էն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք վայն հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցումը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 7

- Լիբանան Երբ տիրացաւ իր անկախութեան:
- Որն է մանուկներու առաջին ֆրանսական գիրքը:
- Ի՞նչ գիրք կարդաց «Ճաբաթ մը ճառին վրայ» պատմուածքին հերոսը:
  - Անուն - Մականուն
  - Վարժարան
  - Ծննդեան թուական
  - Բեռաձայնի թիւ

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 6Ի ՃԱՌՈՂԸ

Բարցարան թիւ 4ի շահողը հրակ Մոլրատեան (10 տարեկան «Ս. Խանամիրեան»էն) շահեցաւ անցեալ ամսուան մրցումը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ազդակ»էն, «Ճաղկոյեան» կեդրոն:



# ՃԱԲԱԹ ԵՐ ԾԱՌԻՆ ՎՐԱՅ

Երեւակայեցէ՛ք, երբ տասնե-  
րեքէն տասնըչորս տարեկան էի,  
ամբողջ շաբաթ մը բնակեր եմ  
թթենիի մը վրայ:

Չեմ գիտեր՝ ինչ ճանր յան-  
ցանք մըն էի գործեր, եւ գիտնա-  
լով, որ երբ հայրս գայ, խստօրէն  
պիտի պատժէ զիս, մտածեցի  
փախչիլ եւ խուսափիլ պատիժէն:  
Մեր բակը կար կիսաչոր թթենի  
մը, որուն մէկ ճիւղը բավկաթոռի  
պէս բան մը կազմեր էր:



Բարձրացայ հոն՝ հետս առ-  
նելով ներքնակ մը, բարձ մը, շիշ  
մը ջուր, հաց, պանիր ու տեղա-  
տրուեցայ:

Հայրս կէսօրին տուն եկաւ. կը  
փնտռէր զիս, որ պատժէ. բայց  
երբ իրեն ցոյց տուին ճառին  
վրան թառած այլանդակ թռչու-  
նը, ճիճաղը բռնել չկրցաւ:

– Լա՛ւ, – ըսաւ, – մնայիր հոն,  
տեսնենք վերջը ո՛վ կը վղջայ:

Ու ժամերով անշարժ գամուած  
մնայի հոն: Երեւակայեցէ՛ք, ինչ  
տանջանք էր ասիկա ինձի նման  
պատանիի մը համար, որ վար-  
ժուած էր շարժուն կեանքի, կը  
սիրէր վազել, մագլցիլ տանիքնե-  
րուն վրայ...

Այո՛, իրաւունք ունէր հայրս,  
չէր անցեր երկու ժամ, որ արդէն  
կը վղջայի ըրած խենթութեանս  
վրայ: Սակայն չէի ուզեր իջնել,  
պատիժս կրել կամ ներողութիւն  
խնդրել:

Ուրեմս պէտք է բանով մը  
վրադէի: Բանի մը ճիւղեր կտրե-  
ցի, թափեցի վար. տերեւները

թթոտեցի, փակցուցի ասիս ու  
պայթեցուցի: Ետքը փորձեցի  
քնանալ. սակայն տեղս սկսած  
էր նեղացուցիչ դառնալ:

Ջանացի իջնել ճաճուկ, բայց  
հայրս բաց պատուհանին առջեւ  
նստած կը կարդար:

– Կարդա՛մ, – յանկարծ մտա-  
ծեցի ես, – թերեւս ես ալ հայրի-  
կին նման կրնամ երկար նստիլ  
ու կարդալ: Ահ, եթէ ձեռքս հե-  
տաքրքրական գիրք մը ըլլար...

Մինչեւ իրիկուն տանջուեցայ:  
Բայց երբ հայրս տունէն դուրս  
ելաւ, իսկոյն վար սահեցայ ճա-  
ռէն, ճառէն ինչ որ մնացեր էր՝  
կերայ, ապա անկողինիս մէջ  
քնացայ:

Յաջորդ առտուն թէեւ հայրս  
զիս անկողինին մէջ տեսեր էր,  
սակայն անխօս գացեր էր դուրս:

Արթննալուս պէս, նախքան  
ճառ բարձրանալս, մտայ հօրս  
գրադարանը եւ ընտրեցի մեծ  
գիրք մը:

Մանր տառերով այդ գիրքը՝  
«Սու ու վարդիթեռ» գիւղական

կեանքի մանրամասն նկարա-  
գրութիւն մըն էր, գրուած պարզ  
լեզուով: Յափշտակութեամբ  
սկսայ կարդալ: Չէի գիտեր, քա-  
նի՛ ժամ անցեր էր, երբ հայրս  
տուն եկաւ: Ներս մտաւ թէ չէ,  
կեցաւ եւ աչքերը յառեց վրաս:

Մեր ակնարկները իրարու հան-  
դիպեցան:

– Ինչ կ'ընես հոն, – հար-  
ցուց վարմացած:

– Գիրք կը կարդամ,  
հա՛յրիկ:

– Ուրկէ գտար:

– Քու գրադարանէդ:

– Ինչ գիրք է: Կարդացածդ  
կը հասկնամ:

– «Սու ու վարդիթեռ»:  
Բոլորը կը հասկնամ:

– Այդպէս գիրք կարդալ  
վարն ալ կրնայիր, բայց ոչինչ,  
կարդա՛:

Ճաբաթ մը ճառին վրայ ապ-  
րիլս այնքան օգուտ տուաւ ինձի,  
որքան չէր տուած ամբան ամ-  
բողջ արձակուրդս: Կը կարծէի,  
թէ եթէ պէտք է ուսում ստանայի,

վարգանայի, դպրոցն ալ հերիք  
էր:

Սխալած էի: Այն օրէն, երբ  
առաջին անգամ ճառին վրայ  
թառած ինքնաբերաբար կարդալ  
սկսայ իրարու ետեւէ երեք-չորս  
գիրք, այն օրէն բոլորովին ուրիշ  
կերպ սկսայ նայիլ կեանքին  
վրայ: Երբ իջայ ճառէն, այլեւս  
այն տղան չէի, որ աննպատակ  
կը վազէր եւ իր անհամ անառա-  
կութիւններով կը զվուեցնէր  
շրջապատը:

Օր մըն ալ կէսօրին իջեր էի  
խոհանոց, որպէսզի մինչեւ հօրս  
վերադարձը ուտեմ եւ նորէն  
բարձրանամ տեղս: Յանկարծ ես  
ու հայրս դէմ դիմաց ելանք: Ես  
կանգ առի:

– Է, ա՛լ չես փախչիր:  
Պատժուելէն չես վախնար, –  
հարցուց հայրս ժպտելով:

– Ո՛չ, դուն զիս այլեւս չես  
պատժեր, որովհետեւ վղջացեր  
եմ եւ իրաւ ներողութիւն կը  
խնդրեմ, – պատասխանեցի ես:

– Կը հաւատամ: Իսկ գիրքդ  
աւարտեցիր:

– Ո՛չ դեռ:

– Աղէ՛կ, քեզի համար նոր  
գիրք մը բերեր եմ. երբ ձեռքինդ  
վերջացնես, այդ ալ կարդա՛: Իսկ  
երբ կարդալ կ'ուզես, մտիր գրա-  
դարանս, դուռը ետեւէդ գոցէ,  
որպէսզի քեզ չխանգարեն:

Ահա՛ այսպէս էր, որ ճառ ելայ  
երեխայ եւ ճառէն իջայ պատա-  
նի:

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱՋԵԱՆ

## ՊՁՏԻԿ–ՄՁՏԻԿ ԵՒ...

Ծարունակուած՝ Յրդ էջէն

● Բուսական հեքիաթներէն  
ձեզի ճանօթ պէտք է ըլլայ շա-  
տերուն դասագիրք դարձած  
գիրքին հերոսը՝ Պետիկը եւ  
«Պետիկն ու Գայլը» հեքիաթը:

● Նորվեկիական հեքիաթնե-  
րէն անպայման պէտք է կարդաք  
ճամբորդող կարկանդակին  
պատմութիւնը:

● Իսկ գիտէ՞ք, թէ դանիացի  
նշանաւոր հեքիաթագիր հանս  
Քրիսթիան Անտըրսըն (որ գրած

կամ մշակած է «Ծովանուշ»ը,  
«Թագաւորին նոր զգեստը»,  
«Փոքրիկ քաջ զինուորը» եւ այլ  
հեքիաթներ), եղած է պարզ կօշ-  
կակարի մը որդին:

● Արաբական աշխարհին մէջ  
սովորութիւն էր պատմութիւննե-  
րը պատմել միայն սրճարաննե-  
րուն եւ շուկային մէջ:

ՆՃԱՆԱԻՈՐ ՏԻՊՈՐՆԵՐ  
Արաբական աշխարհէն Ալատ-  
տինը կը գրաւէ մեզ իր համես-

տութեամբ եւ ճարպիկութեամբ,  
Ալիսը՝ իր զուտ երեւակայական  
արկածախնդրութիւններով, Մէրի  
Փոփինը՝ փոքրերուն եւ չափա-  
հասներուն մօտ իր ստեղծած  
խանդավառութեամբ, Մոկլին՝  
«Անտառի գիրքին» իր արկա-  
ծախնդրութիւններով, Թուման-  
եանի Քաջ Նապարը՝ բախտով  
իշխան դարձած իր ճոյլի տիպա-  
րով, «Բարեկենդան»ի անճա-  
րակ մարդն ու կինը՝ իրենց

միամտութեամբ...  
Տիպարներու, հերոսներու եւ  
պատմութիւններու շարքը երկար  
է: Ներկայիս հեքիաթներու աշ-  
խարհը կը շարունակէ ճնիլ նոր  
հերոսներ, ինչպէս՝ շատերուն  
սիրելի հերի Փոթըրը: Ձեզի կը  
մնայ անոնց հետ ընկեր ըլլալու  
համար Պլոտիկ–Մպտիկին պէս  
պրպտել, գտնել եւ կարդալ:

ԱՄ, ԱՅՍ ԽԵՂԾԵՐԸ

Գարուն էր: Նստած էի մեր խոհանոցին պատշգամբ: Ծատ ուրախ էի: Գարնան երկրորդ օրն էր եւ մեր հայրենի դասը կը խօսէր այս կուարթեղանակին մասին: Յանկարծ նկատեցի շատ խեղճ եւ աղքատ մարդ մը, որ կուլ էր եւ հագած էր պատըռտած, սեւցած, հին հագուստներ: Ան կը հաւաքէր տուփեր եւ կը տանէր փանափան գործարաններ, որպէսզի ամսուան վերջը քիչ մը դրամ շահէր, որով հապիւ պիտի կարենար իր ծերմակ մազերը կտրել տալ: Ծերունին նաեւ կ'ընէր ուրիշ գործեր, բայց դրամ չէր շահեր: Աղքատը գիշերները կը քնանար աթոռի մը վրայ, որ գտած էր ծամբէն. շատ աղտոտ եւ հին էր այդ աթոռը:



ՍԱԳՕ ԴԱԽԻԹ  
(Ե. դասարան, Աքսոր Գասարձեան վարժարան)

Ինչ կեանք...

Անցեալ ամիս, երբ մօրս հետ շուկայ գացած էի, կանաչեղէն ճախողին քով, դարձեալ տեսայ այդ մարդը: Ան հապիւ կրնար խօսիլ եւ բան մը ուզել: Քիչ ետք գրպանէն հանեց քանի մը ոսկի եւ խնդրեց կէս քիլօ կանաչ լուբիա: Ծախողը շատ գէշ ձեւով տուաւ այդ տոպրակը: Իսկ միւս յաճախորդները հեռացան անկէ, որովհետեւ կը հոտէր:

Խեղճ մարդ...

Օր մը շատ ցաւալի դէպք մը պատահեցաւ: Առտու կանուխ արթնցած էի, երբ որ անխիղճ մարդ մը այս ճերունիին տուփերը կը գողնար: Աղքատը կը փորձէր հասկցնել գողին, որ իր ըրածը սխալ է, բայց..


Այս մարդուն իրաւունքն է մեզի պէս ապրիլ, ուտել, խմել եւ իր վաւակները դարոյց դրկել: Այո՛, ես կ'ուզեմ օգնել, բայց չեմ կրնար: Պիտի փորձեմ օգնել այս խեղճերուն:

Լիբանանի Օգնութեան Խաչը կամ LONը կարելոր են: Անոնք պէտք է օգնեն բոլոր խեղճերուն եւ աղքատներուն: Իսկ օգնել եւ տալ բաները շատ կարելոր են մեր կեանքին մէջ:

ՃՈՂԵՐ ՅՈՎԹԱՆՆԵՍԵԱՆ  
Ե. դասարան




ԱԼԵԱԿ ԱՏՈՅԵԱՆ (7 տարեկան, Ճեմարան)



ՍԱՐԲԱՏ  
ԳԵԹՍԵՍԱՆԵԱՆ  
(7 տարեկան, Ճեմարան)



ԳԵՈՐԳ ՄՍԸՐԼԵԱՆ (Ե. դասարան, Աքսոր Գասարձեան)



ՃՈՅՍ ԴԱԽԻԹԵԱՆ (9 տարեկան, Ս. Խանամիրեան)

Ձեր գրոյթիմները կամ նամակները կրնաք ուղարկել՝  
bezdlg\_mezdlg@hotmail.com  
կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ի  
խմբագրութեան, «ԱՋԴԱԿ»  
«Ճաղպոյեան» կեդրոն